ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ
ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

12 ԱՊՐԻԼԻ, 2025թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, Հայաստանի Բանկերի Միություն ՀԿ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ բանկերը, վարկային, վճարահաշվարկային, ներդրումային և ապահովագրական կազմակերպություններ ներկայացնող թիմերը: Մրցաշարը կացնկացվի անհատական և թիմային ձևաչափով, ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Անհատական մրցանակներ.

- 1-ին տեղ – Հանգստյան ուղեգիր Ստեփանավանում /7 գիշեր/ նաև հատուկ հնարավորություն մասնակցելու շախմատի միջազգային հավաքին
- 2-րդ տեղ – Հանգստյան ուղեգիր Ջերմուկում /7 գիշեր/ նաև հնարավորություն մասնակցելու շախմատի միջազգային մրցաշարին
- 3-րդ տեղ – Հանգստյան ուղեգիր Ծաղկաձորում /7 գիշեր/ նաև հատուկ հնարավորություն մասնակցելու շախմատի միջազգային մրցաշարին

Թիմային մրցանակներ.

- 1-ին տեղ գրաված թիմ – Հանգստյան ուղեգիր Ծաղկաձորում /2 գիշեր/
- 2-րդ տեղ գրաված թիմ – Հանգստյան ուղեգիր Դիլիջանում /2 գիշեր/
- 3-րդ տեղ գրաված թիմ – Հանգստյան ուղեգիր Աղվերանանում /2 գիշեր/

Հատուկ մրցանակներ.

Հաղթող թիմի համար սահմանված է **հատուկ մրցանակ** Հայաստանի Բանկերի Միության կողմից: Մրցանակը Հայաստանի Բանկերի Միության Ուսումնական և Որակավորման Կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթաց է /Թիմի անդամները 3 ամսվա ընթացքում, ըստ իրենց ցանկության, կարող են ընտրել մեկ դասընթաց և մասնակցել անվճար/:

Մրցանակներ ոչ վարկանիշային թիմերի համար.

- Գիրք հայտնի գրոսմայստերների ստորագրությամբ
- 1 ամսյա անվճար բաժանորդագրություն ակադեմիայում գործող շախմատի ակումբում

ԺԱՄԿԵՏՆԵՐ

12 ապրիլի	12:00	1-ին տուր,
12 ապրիլի	12:30	2-րդ տուր,
12 ապրիլի	13:00	3-րդ տուր,
12 ապրիլի	13:30	4-րդ տուր,
12 ապրիլի	14:00	5-րդ տուր,
12 ապրիլի	14:30	6-րդ տուր,
12 ապրիլի	15:00	7-րդ տուր:

ՄՐՑԱԿԱՐԳ

Մրցաշարը կացնկացվի անհատական և թիմային հաշվարկով:

Անհատական հաշվարկ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Թիմային հաշվարկ

Թիմում մասնակցիների քանակը չպետք է գերազանցի 3-ը, իսկ թիմային մրցանակային տեղերը որոշելու համար հաշվի է առնվելու թիմի մասնակիցներից 2-ի լավագույն արդյունքը:

Թիմի մասնակիցների կազմը փոփոխության ենթակա չէ: Թիմի մասնակիցները պետք է հանդիսանան տվյալ կազմակերպության աշխատակից: Թիմի մասնակիցները մրցաշարի ընթացքում չեն խաղալու միմյանց հետ:

Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում անհատական մրցաշարում թիմի մասնակիցների ավելի բարձր տեղ գրաված արդյունքը:

ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Մրցաշարի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 150 000 ՀՀ դրամ: Փոխանցումները անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝

Շահառու՝	Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
Բանկ՝	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝	1570018417800100
ՀՎՀՀ՝	02560522

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել կազմակերպության անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար:

ԳՐԱՆՑՈՒՄ

Կնքված և ստորագրված հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2025 թվականի ապրիլի 11-ը, ժամը 18:00-ն: Կանոնադրությանը կցված հայտը լրացված վիճակում կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք. Երևան, Շևչենկո 34/:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, Էլ. փոստ՝ info@chessacademy.am